ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2023 թվականի N 539-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ, ԳՈՐԻՍ, ՍԻՍԻԱՆ, ՏԱԹԵՎ, ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Ն. Ղազարյանի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների համար ձեռք բերված վառելափայտի փոխադրման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2200-Ն որոշման N 2 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել գումար 6024200 (վեց միլիոն քսանչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ռոբերտ Կոստանդյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ռոբերտ Կոստանդյանին՝ որոշմամբ նշված աշխատանքներն ավարտելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 27
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290